

ծինս տեղեկատվության վրա, այն վերագրել է Ախթալայի Գլխավոր եկեղեցու կառուցմանը: Այս վարկածը դժվար է հիմնավորված համարել, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հենց խաչքարին և ոչ թե եկեղեցուն (որի մասին խոսք չկա, և ինչը նկատել է հենց ինքը Պ. Մուրադյանը) և ապա տրամաբանական պետք է համարել, որ սույն եկեղեցուն առնչվելու դեպքում խաչքարը կանգնեցվեր տաճարի մոտ (որն ընդունված կարգ էր) և ոչ թե մի ուրիշ վայրում: Եվ ապա արձանագրության մեջ խոսքը գնում է ոչ թե շինություն կառուցելուն, այլ խաչքարը կանգնեցնելուն, և Հողահատի տեղում կանգնեցված Ս. Աստվածածինը հենց այս խաչքարի անունն է, ինչպես Տերունական, Ս. Սարգիս, Ամենափրկիչ և այլն:

Պղնձահանքի համալիրի տեղում Կյուրիկյանների կողմից կառուցված եկեղեցի է եղել, որ Իվանեն «գոր իւր շինեալ էր վանս վրաց, առեալ ի հայոց»:⁴⁸

Դատելով ոսկեհուռ մեծ խաչը Պղնձահանքից Նորավանք վերադարձնելու մասին Ստ. Օրբելյանի պատմության շարադրումից՝ կարելի է պնդել, որ Ախթալայի Ս. Աստվածածինը գործում էր առնվազն 1216 թ.:⁴⁹ Հսկանական է ընդունել, որ եկեղեցին կառուցել է Իվանե աթաբեկ Ջաքարյանը՝ 1215 թ. այն դարձնելով երկաթնակ քաղկեդոնականների հոգևոր-մշակութային գլխավոր կենտրոն,⁵⁰ և ուր հետագայում թաղվեցին ինքը՝ Իվանեն և որդին՝ Ավագը: Ամրոցի ներսում պահպանվում են սրահավոր փոքր եկեղեցին, երկհարկ ապարանքը, սեղանատունը, կացարանները, իսկ դրսում՝ զույգ եկեղեցիները, Բարսեղ, Գևորգ միանավ աղոթարանները, կացարանամերձ մատուռը, ամրոց-դիտակայանը և այլ ավեր ու կանգուն հուշարձաններ:

Ամրոցի մուտքը, վանքը և եկեղեցիները վերականգնվել են ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության կողմից 1938-1988 թթ.:

Մեծ եկեղեցուն թաղումներ են կատարվել, ինչը խստագույնս արգելված էր միաբնակ հայերի ծիսակարգով: XIX դարում եկեղեցին ու նախասրահը վեր են ածվում քիֆլիսաբնակ Մելիքովների իշխանական տան մնչեցյալների հանգստարանի, ուր և մնում են վրացերեն ու ռուսերեն լեզուներով հիշատակագրված նրանց սալատապանները:

Արձանագրություններ կան գյուղի արևելակողմում գտնվող թաղածածկ փոքրիկ մատրան բարսավորին և մի քանի խաչքարերի ու տապանաքարերի վրա: Հնագույնը Սարիամ իշխանուհու արձանագրությունն է, որն ունի 1188 թվականը, մնացածը վերաբերում է XIII դարին:

ԱԽԹԱԼԱՅԻ ՎԱՆՔ

543. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արսիդի հյուսիսային բնում, 1 տող.

ԷՓՄԷ:

Ծանոթ. Ներկագիր այս մակագրությունը, թերևս, ԷԻՄԷՓ, ՀՈՎՄԷՓ, բացվել է որմնանկարի մաքրման-վերականգնման ընթացքում, ծեփի տակ, որտեղ նկատվել են մի քանի հայագիր անուններ՝ ներկաթափ և անընթեռնելի: Չափազանց կարևոր է, որ տաճարի հսկայածավալ որմնանկարների հեղինակները, այդ թվում Հովսեփը, եղել են հայ արվեստագետներ, որոնք իրենց անունները մայրենիով «ծածկագրել» են սվադի տակ՝ թերևս հավատացած լինելով, որ դրանք ի հայտ կգան մի օր, ինչպես այս դեպքում:

⁴⁸ *Կիրակոս Փանծակեցի*, էջ 238:

⁴⁹ *Ստեփանոս Օրբելյան*, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 352:

⁵⁰ Երկնտելի է, որ Սարիամ Կյուրիկյանը ի գորու լինելը իրագործելու այսպիսի ծավալուն մի ձեռնարկում, և նրա հսկայական մակերեսները ծածկեր գունագեղ որմնանկարներով՝ խորշելով նաև քաղկեդոնիկ դավանության հակումներին:

544. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. Կյուսիսարեւելյան ավանդատան հատակին, 4 տող.


Ջ Մ Ո Ս Ե Ս Ք Ա
 Յ Ա Ն Ա Յ Ա Ղ Ա
 Ի Թ Ս Յ Ի Յ Է Ս Յ
 Ի Ք

ՋՄՈՍԵՍ ԲԱ-
 ՅԱՆԱ ՅԱՂԱ-
 ԻԹՍ ՅԻՇԵՍՑ-
 ԻՔ:

Դրատ. «Լումայ», 1900, Ա, 4, Աղանյան, 244, «Ազգ. հանդ.», VII-VIII, 429, Մուրադյան, 34Ա, 204:

Ծանոթ. Երկարավուն սալաքար է, մի ծայրն էլ պոչուկ՝ պատվանդանի մեջ ան-
 րացնելու համար: Ակներևաբար, ի սկզբանե այս սալաքարը նախատեսվել է որպես
 խաչքար: Խաչքարը համարվել է մինչև Ժ դ. գործ, որը Պ. Մուրադյանին հայտնել է Ս.
 Ավագյանը, որպես Ս. Բարխուդարյանի կարծիք:

545. **ՄԱՍՈՒՌ**. գյուղից արևելք, գետակի ձախ ափին, թաղածածկ, հարավային
 մուտքի բարավորին, 5 տող.



ԿԱՍՄԲԵՐԱ-
 ՐԻՆ ԱՅ ՅԱՍՍ ԱՍՏՈՒԱԾԱԶԱԻՐ ԱՐՔԱԷ
 ԴԵՄԵՏՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ
 ՏՐ ԶՈՎԱՆԻՍԻ, ԾԻՆԱՍԾՂԱԻՐՈՒԹԵԱՆ ԱԻՄՈ-
 ՆԱ, ԴԵԿԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԱԲՐՈՊԻՐԻՆ, ԵԱ՝ ՄԵՂՈՒՑԵԱԼԷ:

Դրատ. Ջալալյանց, Ա, 85, «Լումայ», 1900, Ա, 246, «Ազգ. հանդ.», VII-VIII, 431, Մուրադյան, 34Ա, 204:

Ծանոթ. Անավարտ է. խոսքը գնում է վրաց ԴԵՄԵՏՐ Բ թագավորի մասին: Այս հիման
 վրա Պ. Մուրադյանն արձանագրությունը թվագրում է 1271-1289 թթ.՝ թեև նրան հենած
 խաչքարը ավելի հին է (1245 թ.): Տե՛ր Զովհաննեսը Զաղբատավանքի առաջնորդն էր,
 որը չնայած դավանական անհամամտությանը, այնուամենայնիվ որոշակի իրավասու-
 թյուններ ուներ Ալեքսլայի հոգևոր կենտրոնի հանդեպ, այլապես նա հազիվ թե հանդես
 գար առաջնորդ (= ժինամծղար) Սիմոնի հետ: Աւքրոպիր (= Ոսկեբերան) սարկավագի
 մասին տեղեկությունները տես Պ. Մուրադյանի նշված աշխատությունում, էջ 209:


546. **ԽԱՉՔԱՐ.** մեծ և գեղաքանդակ, պատվանդանի վրա, գյուղից դեպի արևելք, գյուղատեղիի ավերակների մեջ, վերի եկեղեցու պատի տակ, թիկունքին և հարավային կողմն. 23 տող.

† ԻԹՎԻՍՈՂԴԿԱ	ՆԸՍՏ	Ի ԹՎԻՍ : ՈՂԴ: (1245), ԿԱ-	ՆԱԳԸՍՏ-
ՆԳՆԵՅԱԻ ՄԲՏՐՈ	ԱՐԱՆ	ՆԱԳՆԵՅԱԻ ՄԲ ՏԼԵՐՈ-	ԱՐԱՆ-
ԻՆԱԿԱՆՍ ՅԱՐԵԻ	ԻՆՐՈ	ԻՆԱԿԱՆՍ ՅԱՐԵԻ-	Ի ՄԵՐՈ-
ԻՇԱՏՈՒԹԻԱԻ	ՅՉԻ	ՇԱՏՈՒԹԻԼԻՆ՝ ԱԻ	Յ՝ ՁԻ-
ԱԳԻՆ ԵԻ ԾԻՆԱ	ՍԵԻ	ԱԳԻՆ ԵԻ ԾԻՆԱ-	Ս ԵԻ
ՄԾՆԱԻՐՈՒԹԵ	ՉԱՄ	ՄԾՆԱԻՐՈՒԹԵԼԱՆ՝	ՉԱՄ-
ՊԵՏՐԵԻ ԵԻ ՀԱ	ՈՒՍԻ	ՊԵՏՐԵԻ, ԵԻ ՀԱ-	ՈՒՍԻ-
ՅՐԱ ՊԵՏՈՒԹԵՆԱ	ՆԻՖ	ՅՐԱ ՊԵՏՈՒԹԵԼԱՆ՝ ՀԱ-	Ն ԻՍ Յ-
ՄՉԱՍՊԱԵՍՅԱ	ԱՂԱԹ	ՄԼԱ՝ ՉԱՍՊԱ, ԵՍ՝ ՅԱ-	ԱՂԱԹ-
ԿՈՒԲԵՅԿԱՆՂ	ՍՅԻ	ԿՈՒԲ ԵՐԵՅ, ԿԱՆԳՆ-	Ա ՅԻ-
ԵՑԻՉԻԱՉՍԻՆԱ	ՇԵՑԵ	ԵՑԻ ՉԻԱՉՍ Ի ՀԱ-	ՇԵՑԵ-
	Ք.		Ք:

Հրատ. Չալալյանց, Ա, 85 (միայն բովանդակության շարադրանքը). Մուրադյան, ՀՎԱ, 204:

Ծանոթ. Ավագը Իվանն Չաքարյանի որդին է, Պետրեն՝ Ախթալայի վանքի վանահայրը, Համագասպը՝ Հաղբատավանքի առաջնորդը:

547. **ԽԱՉՔԱՐ ԱՍԵՆԱՓՐԿԻՉ.** խորանի պայտածև կամարին և խաչահանգույցում.



ԱՍԵՆԱՅՓՐԿԻՉ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ:
 ԲՍ ԱԾ,
 ՏՐ ՅԱ:

Ծանոթ. Խաչը փորված է, հղկած մակերեսով բավականին մեծ քարի վրա, որն ի սկզբանե եղել է մատուռի պատի մեջ: Այս դեպքում նույնպես ակնախաչի տերունական բառերը մատնանշում են խաչելության գաղափարը, իսկ հիշատակագիրը՝ հարության:

548. **ԽԱՉՔԱՐ.** գեղաքանդակ, կանգնած է դպրոցի բակում, թիկունքին, 11 տող.

ԵՍՄԱՐԻԱՄԴ	ԵՍ՝ ՄԱՐԻԱՄ, Դ-
ՈՒՍՏՐԿԻՐԻԿԵ	ՈՒՍՏՐ ԿԻՐԻԿԵ-
Ի ԿԱՆԳՆԵՑԻՉ	Ի, ԿԱՆԳՆԵՑԻ Չ-
ՊՂԸՆՉԱՀԱՆ	ՊՂԸՆՉԱՀԱՆ-
ԱՅՍՀՈՂՀԱ	ԱՅՍ ՀՈՂՀԱ-
ՏԻՄԲԱԾԱԾ	ՏԻ ՄԲ ԱՍՏՈՒԱԾԱԾ-
ԻՆՍՈՐՔԵՐ	ԻՆՍ ՈՐՔ ԵՐ-
ԿՐՊԱԳԵՔ Չ	ԿՐՊԱԳԵՔ՝ Չ-
ՄԵՉՅԱՂԱԻ	ԱԵՉ ՅԱՂԱԻ-
ԹՍՅԻՇԵՑԵՔ	ԹՍ ՅԻՇԵՑԵՔ:
ԹՈՒՆԼԵԵՐ	Ի ԹՈՒՆԼԱ՝ : ՈԼԵ: (1188) ԷՐ:

Հրատ. Մուրադյան, ՀՎԱ, 202, Շահինյան, ՄՀԿՀ, 40:

